

ԱՇԻՐՈՅԱՆ

ՄՈԿԱՑ  
ՄԻՐԶԱ

ՊԵՏՂՐԱՏ

891.99

Շ-64



26 NOV 2011

891.99 Ա. ՇԻՐՈՅԱՆ

Ձ-64

կջ

# ՄՈԿԱՅ ՄԻՐԶԱ

ՀԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿԵՆ

ՊԵՏՆԱՏ

15 JUL 2013

47972



### ՅԵՐԳ՝ ԱՌԱՋԻՆ

Մոկաց աշխարհի վես լեռնապարում,  
 Խիտ անտառներում ու խոր ձորերում  
 Ապրում եր մի հին ուսմիկ ժողովուրդ,  
 Վոր հողն եր հերկում լեռներում իր լուրթ,  
 Հոտերն եր քշում սարերն իր գողան,  
 Չեր իջել մեջքին վոչ մի գավազան:  
 Ապրում եր այսպես չարքաշ ու բարի  
 Ջանասեր մշակն այն հին աշխարհի:

\*  
\* \*

Մոկաց հովասուն լեռների գրկում  
 Մի մարդ եր ապրում չարքաշ ու տոկուն,  
 Մի մարդ — իմաստուն ու վոսկեբերան,  
 Վոր անգիր գիտեր հին գիր ու գրյան,  
 Յեղեգնը՝ ձեռքին՝ գրում եր գրքեր  
 Ու հերոսական տաղեր ու յերգեր:  
 Ու ուսմիկն արդար գիշեր ու ցորեկ,  
 Կրճեկով հայն իր — գրլզլու ու կորեկ,



2246  
39

А. Широян  
**Мокад Мирза**  
 Гюм Арм. ССР, Ереван 1939 г.

Հողւմ եր նրա գրույցները հին  
Անցած որերի ու մարդկանց մասին:

\* \*

Անուան եր Միրզա: Մի քաջ տղամարդ,  
Ճակատը պայծառ, յերեսները վարդ,  
Թավ հոնքերի տակ աչքեր վառվառն,  
Ինչպես կայծակի ցուլերն ամպերում:  
Թավ բեխերը շեկ, մորուքը գանգուր  
Հայացքը հստակ, ժպիտը մաքուր:

\* \*

Կրում եր գլխին սպիտակ քոլոզ,  
Քոլոզին փաթաթած մետաքսի փուշին,  
Ու փուշուց կախված բարակ թելերով  
Ուլունքներն եյին փայլփլում դռշին:  
Մեջքին մետաքսե ծալքավոր ճարիկ,  
Վոր պինդ սեղմում եր իրանը նրբա.  
Փղոսկրից շինած կոթը խանչալի  
Փայլում եր սիրուն գոտիկի վրա,  
Ձիբուխն եր խրած լայն ճարիկի տակ  
Ու ծխախոտի նրբակար տոպրակ:  
Շավարը գործած եր նրբին շալով.  
Յերբ քայլում եր նա, ասես խշշալով  
Չեփյուռ եր անցնում կանաչ դաշտերով:  
Վտաքերին քյավքյար — մեխերով կոշիկ  
Ու կամ կանեփե փափուկ ըորշիկ  
Հագած՝ շրջում եր լեռները Մոկաց,  
Կեռ թուրն անբաժան գոտիին կապած:

\* \*

Հասել եր անրիժ համբավը նրբա  
Մոկաց լեռներից Ջղիր ու Բոհտան,  
Ուր այն ժամանակ, վորպես ամիրա,  
Իշխում եր եմիր Մահմուդը դաժան:  
Մահմուդը աճրն եր Մոկաց աշխարհի,  
Նստում եր հեռու՝ Ջղիրում իր տոթ,  
Ու վախենալով լեռներից ըմբոս՝  
Մեկիք եր կարգել Մոկաց աշխարհին  
Մի իշխան՝ իրեն շատ հավատարիմ:  
Ու մեռավ մի որ այն մեկիքը հին.  
Դե, ճվ չի մեռնում յերկրի յերեսին:  
Ու հավաքվեցին Մոկաց աշխարհի  
Մեծամեծները՝ իշխան ու քյոխվա,  
Վոր ընտրեն յերկրին նոր կառավարիչ:  
Ամեն մինն ուզեց ինքը տեր դառնա,  
Դառնա մեկիքը Մոկաց աշխարհի,  
Ինքը հավաքի գանձ ու հարկերը,  
Ուղարկի Ջղիր՝ Մահմուդ եմիրին,  
Յերկիրը քանդի, մատնի ավարի,  
Իրեն ել բաժին հանի ավարից:  
Բայց ըմբոստացավ ուսմիկը չարքաշ,  
Բարձրացավ հորդուն ալիքի նման  
Ու կամքը իրա թելադրեց չարկամ  
Տանուտերերին վորպես հրաման:  
Հասկացավ ուսմիկն այն մթին գարի  
Ստեղծագործող ուժը հանճարի  
Ծառս յեղավ ինչպես ծովի գոռ ալիք,  
Ու Մոկաց Միրզին ճանաչեց մեկիք:

Համբավը զնաց Մահմուդը եմիրին, —  
 ՔՍուրդ միշտ կտրուկ թշնամու վզին,  
 Հապա չեն ասում՝ Մոկաց սարերին  
 Մեկիք են ընտրել անորեն Միրզին»:  
 Փրփրեց Մահմուդն, աչքը վուրեց,  
 Ու չար մաքերով հողին քրքրեց...  
 — Թե զորք հավաքի ու գրոհ տալով,  
 Վոնց հարավային մահաբեր սամուս,  
 Անցնի անառիկ Մոկաց լեռներով,  
 Յերկիրն ավերի՝ ցրել տա քամուն,  
 Վայ թե լեռներից ցուրտ հողմը փչի,  
 Քարերի կարկուտ թափվի վերեից,  
 Իր զորքը են խոր ձորերում կորչի,  
 Ինքն ել զըրկըվի որ ու արևից:  
 Ու միտք է անում Մահմուդ Ամիրան  
 Մռայլ, անավոր մի ժայռի նըման:

### ՅԵՐԳ ԵՆԵԿՐՈՐԴ

Ճխաց զարունն հովիտներում՝ արևն անցավ Փութկա  
 Գյալին,  
 Փութկա Գյալուց՝ Տենիս Գյալին, Տենիս  
 Գյալուց՝ Տուրկա Գյալին,  
 Ցողը շողաց թարթիչներին, ծաղիկները աչքը  
 բացին,  
 Մարգարայա շինջ կաթիլները արևի տակ  
 շողշողացին:  
 Արևն յելավ վոսկի մաղեց հովիտներին ու  
 լանջերին  
 Ու հարսնուկներն վողջուհեցին կարմիր լալին,  
 կակաչներին:  
 Յերզիկներից պալան-պալան թռնիրների  
 ծուխը յելավ,  
 Կտուրներին պահ մի խաղաց ու յերկնքում  
 հալվեց, կորավ...  
 Վետվետուն, վառ ծաղիկների վառ բույլերով  
 հանդը շողաց,  
 Կանայք յելան աշխատանքի՝ չթե արվան հալավ  
 հազած:

Իսկ դեռատի աղջիկները ուսին անած  
սափոր ու կուժ՝  
Թոան թեթև դեպի աղբյուր յեղնիկների պես  
մեղմ, անուշ:

Ու բարձրացավ կրծքերի տակ ու կլկլաց յերգը սիրո,  
Ինչպես աղբյուր սարից իջնող՝ արծաթաշող  
կոհակներով:

— Ա՛խ, են տղեն, անուշ տղեն,  
Բոյը չինար, հուր-հրեղեն  
Կտրիճի պես անցավ գեղեն,  
Ձիմ սրտիկը հանավ տեղեն:

— Գեղով ասին.— Յարգ, եկավ,  
Թաղով ասին.— Յարգ, եկավ,  
Բարով եկավ՝ մեր տուն չեկավ,  
Գարուն գիշեր՝ ինձ քուն չեկավ:

Աղջիկների խումբը լռեց ու ցրվեց պարն աղբյուրից,  
Ասես մի ջերմ քամի անցավ ու թշերը համբուրեց:  
Կչկչալով ակը թռան, վերցրին կժերը թողած,  
Շողշողացին աչքերը վառ, սիրտը հույզով դողողաց:  
Թարթիչների քողի աակից հայացքներով սիրածոր  
Նայում են սեզ ձիավորին, վոր իջնում է դեպի ձոր:  
Խրինջում է Բող-Բաղավեն, բերնից փրփուր է  
թափում,  
Հուր է թափում սմբակներից, յերբ քարերին է  
դոփում:

Մեջքի վրա կրում է նա այն քաջառյուծ վորսկանին,  
Լանջից կախված որորվում է վորսի դիակն անազին:

«Մոկաց Միրզեն, Մոկաց Միրզեն» — աղջիկները  
կանչեցին,

Ու են կարոտ կանչը խառնվեց ջինջ աղբյուրի  
կարկաչին:

Քշում է ձին Մոկաց Միրզեն, հաս սարից իջավ ձոր,  
Իսկ հետևից արշավում են մի գույզ առույգ ձիավոր:  
Քաշեց իր ձին աղբյուրի մոտ են քաջ զավակը Մոկաց,  
Գլխով արավ մի աղջկա, ու մոտեցավ նա շիկնած:

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց Միրզեն աղջկան:  
— Ալ-Խաթուն է, — ավեց համեստ պատասխան,

Ու կակաչի նման շիկնեց հուզվելուց:

— Ջրվճր աղջիկ, վճր գեղեն ես:

— Ծափանուց:

— Միրան աղջիկ, հերդ ի՞նչ գործ է անում:

— Հովիվ է նա, ա՛յ, են դեմի սարերում:

— Անուշ աղջիկ, պուտամ ջուր տաս քո կժով,  
Մոկաց Միրզեն խմի, սիրտը հովանա:

— Վրե՛ չըմ տա, — ասավ աղջիկն աշխուժով,  
Գեղ ջուր չտամ, ել ձև տի տամ... — Ժպտաց նա:  
Ու թեթևա թռավ աղբյուրն իր կժով,

Աչքերը պատած սիրո անուշ մշուշով:

Խմեց Միրզան աչքը հառած Ալ-Խաթունի աչքերին,  
Ալ-Խաթունը աչքը հառեց Մոկաց Միրզի աչքերին:  
Յեկ յերբ Միրզան հուր հայացքով ջուրը խմեց  
պաղպաղուն

Ու մխացող ծարափն անցավ, ինչպես հանգչող մի  
կրակ,

— Ի՛նչ լավ անուն ունես, — ասավ, — ի՞նչ սիրուն ես,  
Ալ-Խաթուն,

Այտեր ունես գմբուխտ ու լալ, աչքերդ՝ գույզ վառ  
ճրագ:

Ասով ու ձին ասպանդակեց ու վոնց դարնան գով  
քամի

Շոյեց — անցնով, յելավ ձորից դեպի բլուրը գեմի:  
Հուր-հարստով հայացքները ճամբու զբին նրան լուս,  
Կրծքերի տակ թագցնելով սիրս անուշ մի մրմուռ:  
Աղջիկները աշխուժացան, թռան դեպի ակն աղբյուր,  
Ալ-Սաթուենն է կանգնած մենակ, կուժը դատարկ ու  
ախուր...

Ձեռն են տալիս աղջիկները.

— «Արի, արի, Ալ-Սաթուեն»:

— Արի, արի...»: Ռ՞վ է կանչում. քնած էր նա, թե  
արթուն:

— Են ինչ կտրիճ էր, թռավ,

Յեղնիկ եյի, վար դարկեց,

Սիրտս ցավից սարսուռաց,

Մտախ աբյան գետ բացեց:

— Ձուր խմեց իմ սափորից,

Սիրտս ծարավ, նա զընաց,

Հուր խմեց իմ աչքերից,

Աչքս առավ ու գնաց:

— Են ինչ կտրիճ էր, թռավ,

Սիրտս խոցեց հուր նետով.

Սիրտս պոկեց ու տարավ,

Հարբեցրեց իր հատով:

— «Արի, արի, Ալ-Սաթուեն, արի, արի, գնանք տոնն».  
Կանչում են զեռ աղջիկները, անհոգ կանչում,  
քրքջում.

Կյանքը նույն կյանքն է կրկին, նույնն են արե ու  
վտակ,

Նույն ծագիկներն են ժպտում առվի ափին, թփի տակ:

## ՅԵՐԴ ՅԵՐՐՈՐԴ

Որեք յեկան, անցան որեք, տարին ինչ շուտ է  
վազում.

Մոկաց Մերզեն սր ու գիշեր Ալ-Սաթուենն է  
յերազում:

Վճր ամնուտերը չեք ուզի Մոկաց Մերզի պես փեսա,  
Վճր աղջիկը չի նախանձի Ալ-Սաթուենիդ, ամի Մերզա:

— «Մերզա, դու մեր զլխավորն ես, մեր բնտարածը, մեր  
հողին,

Ծափանց հովվի աղջիկն ինչ է, վոր կին դառնա  
մելիքին:

Յեկ, մեր սիրուն աղջիկներից ջոկիր, վորին հավանես,  
Ապրիլ սիրով բախտավորված, մե խոսփիր իզուր մեզ»:

— «Հովվի աղջիկը յես կուզեմ, իմ Ալ-Սաթուենն  
անգին լալ,

եյն սիրուն աչքը յես կուզեմ, հայացքը ջինջ ու  
զուլալ»:

Ասով, աչքերը վերորեց ու խոսված յելավ դուրս,  
Ճանուտերերը խորամանկ զլուխ տվին սուս ու փուս:  
Բայց լեռնացավ նրանց կրճքում ցասուճն անզոր  
տիրողի,

Նրանց պատիֆն իշխանական Միրզան տվել էր հողին:

\* \*

Դիվանեն դուրս յելավ Միրզեն, կանչեց ջահել մի տղի  
Ու կարգադրեց.

— Բող-Բադավեն թամբի ու բեր, դե, թռի:  
Յեզ յերբ բերին նժուշգն իր սեղ, Միրզան ճակատն  
համբուրեց,  
Շոյեց բաշը, թռավ, հեծավ, փողոցներում չափ տվեց  
Ու սրարշավ քշեց դեպի Ծափանց գյուղի հանդերը,  
Ասես քամին եր սլանում, ավլում հասած արոները:  
Կրծքին կարողը լեռնացած չափում է նա հանդ ու  
ձոր,

— Ե՛մ Ալ-Խաթուն, վառ հեքիաթում ինձ խոստացած  
ալ խնձոր—  
Միտք է անում Մոկաց Միրզեն ու հալվում է  
սիրածով:

\* \*

Վոսիկ սինի արեն յելավ ու վար թափվեց հրակեզ  
Ու շիկացան ժայռերը լերկ վառած թոնրի կողի պես:  
Կյանքը հորդեց ձորերից դուրս, դեպի սարերը մոտի,  
Յայլաղներում ամպի նման փովեց շարանը հոտի:  
Աղջիկները թռան տանից կապոցները շալակած,  
Կապոցներում՝ հաց ու պանիր և կամ մի քիչ սոխ ու  
հաց:

Ու բարձրացան զոզանը գով, ուր մշակները քաղցած  
Սպասում են աղջիկներին՝ աչքը ճամբին դարձրած:  
Հանկարծ Միրզի աչքը շաղվեց ու ձիգ տվեց ստնձը  
կուռ,  
Ձին ծառս յեղավ ու կատաղեց, բերնից թափեց ձյուն  
փրփուր,

Բայց մտրակը փորը դաղեց ու հարվածից սլացավ,  
Մութ ամպերի թևով ասես մրրիկ յեկավ ու անցավ:

— Են ում աղջիկն է կապոցով,  
Են ում մարախն է՝ աչքը ծով:  
Են Ալ-Խաթունն է ալ—ալա,  
Դոշը սպիտակ—ամպի քուլա:

— Են ինչ կաքավ է խատուտիկ,  
Են ուր կերթա տոտիկ-տոտիկ,  
Են Ալ-Խաթունն է ալ պուտիկ,  
Ձով զոզանը կերթա մոտիկ:

4246  
39

— «Ալ-Խաթուն, Էյ Ալ-Խաթուն» կանչեց Միրզեն լի  
սիրով:

Ձին խթանեց ու թռավ, անցավ դար ու փոսերով  
Յեզ յերբ հասավ աղջկան, Միրզեն շտապ ցած թռավ  
Ու դեռ շվար աղջկա գլուխն իր գիրկը առավ,  
Համբուրեց խնր ու յերկմը, սաթ մազերը զուրգուրեց,  
Մատաղ սիրտը բուռն սիրով նա կաշկանդեց ու գերեց:  
Թպրտում է Ալ-Խաթունը, վոնց դիմանա ես սերին,  
«Ա՛խ» է քաշում, նվազում-ընկնում Միրզի ուսերին:  
— Գեզ թնչ ելավ Ալ-Խաթուն,— կանչեց Միրզեն  
հուսահատ

Ու աղբյուրի գով ջրով շփեց դեմքը և ճակատ.  
Ապա մեջքից արձակեց յոթտակ կապած իր գոտին,  
Փոեց յերկար, աղջկան պառկեցրեց չոր խոտին:  
Ալ-Խաթունը յերագուն աչքերը մեղմ բաց արավ,  
Ու յերջանիկ արցունքը թարթիչները թաց արավ,  
Ապա բռնեց Միրզայի ձեռքը, նստեց ու ժպտաց  
Ու իր կողքին Միրզային նստելու տեղ արավ բաց,  
Մոկաց Միրզեն քնքշացավ, նայեց այտին վարդագույն,  
Գրկեց գլուխն ու ասավ.

— Ի՛մ խորոտիկ, Ալ-Խաթուն,  
Թե քեզ ինձ հարս ուզեմ յես, դու ինչ կասես, հոժար չեմ:

— «Յես ինչ գիտեմ՝ ինչ տեսմ... Մենակ կասեմ թե  
ուզես,

Ալ-Սաթունը իր հոգին զուրբան կանի քո հոգուն.  
Յես քո խոսքը կդնեմ իմ լույս աչքին, իմ գլխուն:  
Մոկաց յերկրի մեկիք մարդ հովվի աղջիկը ուզի,  
Յես նազ անեմ, թե՛ Միրզան, Ալ-Սաթուն քեզ չի ուզի»:  
Միրզան գրկեց աղջկան, լույս աչքերը համբուրեց,  
Ու կաթիլներն արցունքի խմեց գուլալ աղբյուրից,  
Հետո ասաց.

— Ալ-Սաթուն, Մոկաց Միրզեն իր հոգին  
Ղուրբան կանի քո հոգուն մինչև իր շունչը վերջին:  
Շրթունքները լռեցին, միայն աչքերն են խոսում  
Ու կրծքերում բանտարկված կարտի գեան է հոսում...

\*  
\* \*

Արևն հոգնած ճամբորդի պես նստեց սարի կառարին  
Հովիտները կուլ գնացին իրիկնային սովերին:  
Ալ-Սաթունը նայեց. հեռվում հացի կապոցն էր թողած.  
— «Վա՛յ, բարո ջան, աչքս կուրանար, յես վճնց թողի  
քեզ սոված»:

Ասավ ու զուրս նետվեց հանկարծ Միրզի գրկից  
աննացի,  
Կապոցն առավ ու սլացավ դեպի սարը դիմացի:  
Ժպտաց Միրզան, նայեց փախչող են յեղնիկի հետեից  
Ու հայացքի նետով նրա շարժումներին հետևեց.  
Ապա թռավ-հեծավ իր ձին, բաշ-ճակատը համբուրեց  
Ու շուռ յեկավ դեպի քաղաք, դաշտի միջով չափ տվեց:

## ՅԵՐԳ ԶՈՐՐՈՐԳ

Միամիտ, ուամիկ Մոկաց լեռներում  
Մի հայ նենգավոր խոջա յեր ապրում:  
Հարուստ էր խոջան, հարուստ բեզիրգյան.  
Ուներ նա Մոկսում յավ քյոշկ ու սարա,  
Ուղտ ու եշերի մի մեծ կարավան  
Ու տասնյակներով նեոքյար ու ծառա:  
Քյարվանը բարձած թանգադին բրդով՝  
Շրջում էր Զզիր, Բաղդադ ու Բասրա,  
Փոխում էր բուրդը վոսկով, արծաթով  
Յեվ եժանագին կտավ ու չթով:  
Ու չթով բարձած քյարվանը նրա  
Շրջում էր Մոկաց լեռների վրա.  
Եժան ու փտած իր ապրանքներով  
Վոչխար էր գնում, փոխում բրդերով,  
Թալանում շեներն ու հարստանում,  
Հոտերը քշում Զզիր ու Բոհտան,  
Ապա գալիս էր ու հանգստանում  
Մոկաց աշխարհում, հարկի տակ իր տան:

Այսպես մի որ, զըրը՛նգ-զըրը՛նգ, քյարվանն յեւով  
Հին Բեդարեն,  
Հասավ Մոկաց լեռնապարին, մտավ ձորը՝ Խնկու-  
Դարեն:  
Կարավանը ամպի նման, վոնց հարավից յեւած փոշի,  
Բռնեց Մոկաց սարի ճամբան, փովեց լեռան կանաչ  
դոշին,  
Մտավ ծաղկած զոզանը զով, մտավ զյուզերն շեն ու  
ավան,  
Դորդացին ծմակները.— «կարավան ե, եյ, կարավան»:  
Ու վազեցին կին ու աղջիկ, վո՛րը առած բուրդ ու կաշի,  
Վո՛րը՝ զործած կապերտ ու շալ, վո՛րը՝ քյավքյար, վո՛րն՝  
ըրըշիկ,  
Վո՛րը՝ մի գառ, վո՛րը՝ շիշակ, կամ մի քանի փարա-  
պըլիկ.  
Իսկ ով չուներ փարապըլիկ՝ հաց կորեկի, կամ  
զըլպըլի:  
Վո՛րը գնեց չիթ ու կտավ, վո՛րը՝ մատնոց, վորը՝ ոճառ  
Ու լեռնային բարձունքներում բացվեց մի ճոխ  
տոնավաճառ:

\*  
\*  
\*

Հրճվում ե նենգ Կոլտո-Խոջեն, մեկը տալիս՝ տասն ե  
շահում,—  
Տասին՝ հարյուր շահ ու վաստակ անգետ ու մութ  
այն աշխարհում:  
— «Խոջա՛, առ այս շալն ու փուշին, չիթ տուր ինձ մի  
քանի արջին»:  
— «Խոջա՛, ասեղ»:  
— «Խոջա՛, մատնոց»:

— «Խոջա՛, մախանթ»:

— «Մրմա՛ ու սիմ»:

Հավաքում ե խոջան բերած բուրդը, կանեփն ու  
ապրշում  
Ու շեներից շինականի աշխատանքը դուրս ե քաշում.  
Հավաքում ե գառ ու վոչխար, յուղ ու պանիր, հաց  
ու գաթա,  
Տալիս ե քիչ ծաղկավոր չիթ, շապկի համար փտած  
կտավ:

\*  
\*  
\*

Քյարվանն այսպես, զը՛նգ հա-զըրը՛նգ, մի առավոտ  
մտավ Ծափանց,  
Մարդիկ դեռ նոր քնից յեւած՝ դեմ վազեցին սրտները  
բաց:  
Նորից յեռաց ժիր առուտուր, շահն ու վաստակ մտան  
զործի,  
Բեզիրգենի խոսքը թուր ե, հակառակը ո՞վ կփորձի...  
Ու բերում ե դառը դատած շինականն իր բերքն ու  
բարին,  
Տանում ե քիչ չիթ ու կտավ, վոր մերկուլթյունն իր  
սթարի:  
— «Խոջա՛, Խոջա՛, մատնոց մի տամ»... Խոջան նայեց  
ու քարացավ,  
Կիրքը, ինչպես թուռնոտ մի ոճ, կրճքում դալար-դալար  
անցավ:  
— «Լեռնային վառ ծաղիկ ե սա, թե՛ մի ջեյրան ե  
սարերի,  
Աղջիկ ե սա մի հասարակ, թե՛ ջեննաթի հյուրի-փերի...»

Միտք ե անուժ Կոլոտ խոջեն.— Թե աղջիկ ե մի  
հասարակ,  
Յես կգնեմ նրան փողով, թեկուզ լինի տեղով կրակ,  
Կփախցնեմ՝ թեկուզ քառսուն պահակ կանգնի  
քաղքի դռան,  
Յեթե նույնիսկ Ռուստեմ-Ջալի գարմի իզիթ սիրի  
նրան:

Այսպես մտքում հոխորտալով՝ խոջան կանչեց մի  
պառավի,  
— «Դադե, ասա, ո՞ւմ աղջիկն ե, ո՞վ ե տերն այն  
Մինամ հավի»...

— Հարսնացուն ե Մոկաց Միրզի,— պատասխանեց  
գաղեն նրան,  
Թեկուզ արար-աշխարհ ման գաս, չկա եսպես սարի  
ջեյրան.

Ծափանց հովվի աղջիկն ե նա, նրա անուռն ե  
Ալ-Սաթուն,  
Մի հեր ունի, մերն ել մեռած ե, վողորմի նըրա  
հողուն...»

— Հարսնացուն ե Մոկաց Միրզի,— հառաչում ե Կոլոտ  
խոջեն  
Ու ծեծկված մի շան նըման՝ պոչը կծկում ե նա  
արզին:

Շատ մտածեց Կոլոտ խոջեն ու դեպ Ջզիր բռնեց ուղի,  
Ներկայացավ մեծ Եմիրին ու համբուրեց վոտքը  
գահի:

— «Քաջ Միր-Մահմուդ,— ասավ նրան շողմբավոր՝  
դեմքով ժպիտը,—

Դու յես միայն մեր ապավեն, մեր փրկություն, մեր  
տերն ու փիթ:

Դու փոխանորդն ես արևի, ու քո հզոր շվաքի տակ  
Կյանք ենք քաշում ու քեզ որհնում մենք՝  
ստրուկներս քո հպատակ:

Են անորեն Մոկաց Միրզին Մոկաց գահի տերը  
դարձավ,

Քո հպատակ ճառանքերին բերեց անթիվ հոգսեր ու ցավ:  
Պարծենում ե, թե—

— «Միր Մահմուդն ո՞վ ե, վոր տեր դառնա Մոկսին.  
Թող նա նստի Ջզիրը, Մոկսը իմն ե՝ Մոկաց Միրզին:  
Արծիվն միայն բուն կշիռն լեռների սեղ  
գազաթներին,

Թող կրկան ճահիճներում, ճահիճը տեղն ե գորտերի:  
Ձեմ տա, ասում ե, հարկ ու տուրք, թե դոռ ունի,  
թող զա՝ տանի,

Ջորք ե կապել բաղմարազում, վոր զա Ջզիրը  
կործանի»:

Ասով ու նենգ աղվեսի պես պոչը քաշեց, կանգնեց  
մի կողմ:

Փոթորկվեց սիրտը Մահմուդի, ասես յեկավ անեղ մի  
հողմ:

— «Ո՞ւմ շունն ե նա,— գոռաց Մահմուդն,— վոր իմ  
ուժին հակառակի,

Հիմար ե նա, ով մերկ ձեռքով կմոտենա թեժ կրակին.  
Ամր եմ անում քեզ բարձրագույն,— դարձավ խոջին  
դժնի արքան,

Տալիս եմ քեզ ոգնականներ— Միր Ավդալը և Միր  
Հասանն,

Կարգում եմ քեզ հարկահավաք. ու թե տարար գործը  
կարգին,  
Դու կդառնաս կառավարիչ են աստատամբ  
լեռնաշխարհին»:

## ՅԵՐԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ձենքը կապած, հագած դրահ, վոնց զիշատիչ անզո  
ու ցին,

Թափվեց խաղաղ Մոկսի վրա Կոլոտ-Նոջի այրուձին.  
Թափվեց խաղաղ Մոկսի վրա, մտավ շեներն անառիկ,  
Տարիների հարկը ժողվեց ու մի բան ել՝ ասպտիկ:  
Ժողովուրդը գանգատավոր, ռանչպարն անճար, վիզը  
ծուռ,

Ամեն կողմից հավաքվեցին, յեկան Մոկաց Միրզի  
գուռ:

— «Միրզա, մենք քեզ իշխան արինք, վոր պաշտպանես  
մեր դատը,

Խփես չարին ու վատերին, լսես խեղճի գանգատը,  
Վոր ամեն մարդ հալալ վաստակն հալալ սրտով ել  
ուտի,

Չմնա չոր տափին նստած՝ քար յերկնքի ումուղին:  
Տներս լի բերք ու բարին Նոջեն տարավ հարկի տեղ,  
Բան չթողեց մեր սթարին, մարեց ճրագ ու կանթեղ:  
Լսեց Միրզան ու լեռնացավ բարկու-թյունը կրծքի  
տակ.

— «Քչեք, ասավ, եզ շներին, պատասխանը յես կտամ»:

Ապա կանչեց Կոլոտ-Խոջին ու վորոտաց զեմ ու զեմ.  
— «Ո՞վ ե տերը Մոկաց յերկրի, Մոկաց Միրզեն, թե  
Խոջեն:

Ո՞ւմ շունն էս, վոր առանց ամբի հավաքում ես  
հարկերը,  
Հարկ ու տուրքի անունի տակ քանդում Մոկաց  
յերկիրը»:

— «Ամբը ունեմ յես բարձրագույն», — ասավ Խոջեն  
խորամանկ,

Ու Միրզայի ձեռքը դրեց մի արքունի հրաման:  
Մոկաց միրզեն առավ, կարդաց հրամանը բարձրագույն.  
Միտք ե անում.—

— «Նենդ թշնամին իմ ճանապարհն ե փակում...  
Հարկերը մենք ենք հավաքել, մելիքները Մոկաց տան,  
Մենք ենք յերկիրը մեր վարել, վնչ Ջգիրը, վոչ  
Բոհտան:

Դավ են նյութել Մոկաց տան զեմ թշնամիները մեր  
նենդ.  
Մենք ել խելքով զործը բոնենք, յեթե իրավ խելք  
ուենենք»:

\*  
\* \*

Հավանք ընկավ շեն ու ավան,  
Հավանք զնաց Մոկաց Միրզին.

— Ալ-Խաթունիդ, հասիք, տարան...

— Կոլոտ Խոջեն փախավ Ջգիր...

Ասես ամպը շաչեց ու ժղին

Ու կրծքի տակ լեռը փլավ.

Միրզան հեծավ Բոդ-Բաղավին

Ու սրարշավ սարը յելավ:

Սարը յելավ մի նեղ ճամբով,  
Բոնեց ծանոթ մի արահեռ.

Ու յերբ դյուղերն հասավ համբափն,

Մի խումբ քաջեր թռան իր հետ:

Վոնց առյուծը վայրի ցիռի

Յերամն անի ցաք ու ցրիվ,

Մոկաց Միրզեն սուրը ձեռին

Հասավ փախչող նենդ ոճերին.

— «Ե՛յ, շուն, կանչեց, ո՞ր ես փախչում,

Մարդ չի պրծնի Միրզի ձեռից,—

Ասավ, ու վոնց դառած թռչուն

Հասավ, ջարդեց եւ ցեցերին:

Ջարդեց, փախան, ցրիվ յեկան,

Կորան անդարձ խիտ շամբուտում,

Վոմանք փախից ջուրը ընկան

Ու խեղդվեցին վարար զետում:

Միրզան գաավ Ալ-Խաթունին

Ճահիճի մեջ՝ յեղեգնուտում

Ու նրա մոտ՝ մի զինվորի,

Վոր Խաթունին եր կապոտում:

Սուրը շողաց ու ցած իջավ,

Առեանգոզն ընկավ զետին,

Ալ-Խաթունը ուրախ ճչաց

Ու փաթաթվեց Մոկաց Միրզին:

Գրկեց Միրզան իր սիրածին

Ու հետ դարձավ իր բանակով.

Մոկաց Միրզի քաջ այրուձին

Մոկսը մտավ հաղթանակով,

Կոլոտ-Խոջեն հաղիվ պրծավ,

Փախավ ու շունչն առավ Ջգիր,

Ու մի քանի պատիժ ու ցավ  
Տանուտերեր— ոես ու զգիր:  
Հասավ Ջզիր ու բոթարեր  
Ամպի նման մոայլադեմ,  
Վորոճալով բազում դավեր,  
Կանգնեց Եմիր Մահմուդի դեմ:  
— «Ապրած կենա մեծ Եմիրը,  
Ասով ցասկոտ Միր-Մահմուդին,  
Միրզան պատեց ամբիղ գիրը,  
Հրամանդ զցեց գետին:  
Ինչպես մի դեղ սարից թռած,  
Կտրեց ճամբան մեր քաջերի  
Ու կարավանն առաջն արած՝  
Գլեց բարձած ուղտն ու ջորին:  
Ամբողջ հարկը մեր հավաքած  
Խլեց, բաժնեց նա զեղեգեղ,  
Քո ուղարկած զորքերը քաջ  
Կորան մարտում արյունահեղ...  
Միայն յես ու իմ քաջերը  
Փախանք՝ կպած մեր ձիերին,  
Բայց հավաքած վողջ գանձերը  
Թողինք Մոկաց Միրզի ձեռին»:  
Ապա առաջ անցան փախած  
Միքանի ձեր տանուտերեր,  
Գյուղապետներ՝ չար ու նախանձ,  
Մոկաց յերկրի նախկին տերեր,  
Ու դավաճան լեզվով քսու  
Մեղադրեցին Մոկաց Միրզին:  
Ասին.

— «Խոջեն ճիշտ ե ասում,

Հարկն ու խարջը տալ չի ուզում,  
Յեթե ուզում ե քաջ արքան—  
Վոր կոտրվի ըմբոստ Միրզան,  
Թուզթ թող գրի, Ջզիր կանչի,  
Իր հողից դուրս նա մի բան չի.  
Սյն ժամ ոամիկն անտեր դառած  
Կչոքի քո գահի առաջ...»:  
Արքան քյաթիպը կանչելով՝  
Մոկաց Միրզին մի թուզթ գրեց,  
Քաղցր խոսքեր շոայելով՝  
Նրան Ջզիր հրավիրեց:

## ՅԵՐԳՒ ՎԵՅԵՐՈՐԿ

Որն եր ուրբաթ, լուսը՝ շաբաթ,  
Գորգում եր Մալաքավեն.  
Շուրջը կանգնած մարդկային պատ,  
Մեջտեղ բացած մեյդան մի լին՝  
Հայ, քուրդ, տաճիկ ու այլազգի  
Սպասում են ձիաբշավի,  
Զիրիգ-խաղի, թռչք-վաղքի,  
Ըմբշամարտի, պար-կաքավի:  
Ճշաց գուռնեն զիւ ու բարակ  
Ու փոթորկեց սիրտը մարդկանց,  
Թաղը յելավ-իջավ արագ  
Ու դառուլի ձայնը թնդաց:  
Կին ու աղա իրար բռնած,  
Ճկույթ մատները կեռ արած,  
Վոսայուններով շեշտ ու արագ  
Շարքով մտան հրապարակ:  
Շուրջը մարդկանց հսկա մի ծով  
Ու սրտերը յեռուն բոցով,  
Ասես կանգնած պար են գալի.  
Ու գարկի հեռ, վոնց վոր ալիք,

Յեռում ե ծովն ու փոթորկում.  
Յեվ պատնեշող մարդկանց հոգում  
Ուռճանում ե սերը կյանքի,  
Սերը գարնան, աշխատանքի:  
Հանկարծ սարի կանաչ լանջին  
Մի խումբ ձիեր վրնջացին:  
—«Միրզան յեկավ, Միրզան յեկավ»—  
Ամբոխի մեջ շշուկ ընկավ,  
Ու մարդկային պատը հսկա  
Հեռ-հեռ գնաց, ճեղքվեց մի պահ.  
—«Ճամբա տվեք Մոկաց Միրզին,  
Ճամբա տվեք»,—իբար ասին:  
Մոկաց Միրզեն վողջույն տվեց  
Ու մեյդանը մտավ արագ,  
Թիկնապահները հետևից,  
Նժույզները բոց ու կրակ:  
Մտավ մեյդան Բոզ Բաղավեն  
Ու հաղթական զիւ-վրնջաց,  
Ալեկոծվեց Մալաքավեն,  
Արձագանգեց ու զրնգաց:  
Պարը լոց, ու պարողներն  
Ցրիվ յեկան ամբոխի մեջ,  
Առաջ անցան ձիավորներն,  
Ու ջիրիզի խաղն սկսվեց:  
—«Յեհեյ, հեյ, հն... ճամբա տվեք».  
Ու սրարշավ հրապարակ  
Մտան յերկու ջահել աղբբը,  
Յերկու նժույզ՝ յերկու կրակ:  
Ու մի քանի պտույտ տվին  
Ձիավորներն այն պատանի.

Ասես յելած հողմի թեւին  
Փոթորկվեց սիրտը մեյդանի:  
Չախ ձեռքն ամուր ձիու սանձին,  
Աջով բռնած կուռ մի մկունդ,  
Թե սիրտ ունես, առջ անցիր,  
Կզլորվես ինչպես մի գունդ:  
Փռնչում են ձիերն անսաստ  
Ու կրծում են սանձերը կուռ.  
Ձիավորները անհաստատ  
Առաջ տալ չեն համարձակվում:  
— «Հէյ, հո...» մեկ ել թռավ մի ձին,  
Վոնց պատնեշից պոկված քամի՝  
Բարափները զրնգացին  
Արձազանգից նրա ձայնի:  
Առաջ սուրաց նժույզը սեղ՝  
Հովին տված բաշերն իր հորդ.  
— «Թե կտրիճ եք, թոեք, հասեք»...  
Ամբոխի մեջ խինդ ու դրոբդ:  
Վոնց աղեղից թռած մի նետ,  
Վոնց հեղեղից հորդած մի պետ,  
Սանձը թողած, խթեց փորը,  
Թռավ յերկրորդ ձիավորը.  
Շչաց մկունդն ու նետի պես  
Առաջ սուրաց ուժղին թափով,  
Ճկվեց փախչողն յեղեգնի պես,  
Մկունդն անցավ ուսի տակով:  
Մկունդն անցավ ուսի տակով,  
Թափով խրվեց խորը գետին  
Ու ձիավորն հաղթանակով  
Հասավ սահման զրած կետին:

Թնդաց ամբոխն. հաղթանակողն  
Վերադարձավ ծափերի տակ,  
Մինչդեռ պարտվածը, սիրտը դող,  
Կուլ եր տալիս ծաղր ու կատակ:  
Տաքացավ ջրիդն, ու խմբերով,  
Արգելքներով ու թումբերով  
Հեծվորները թռան արագ  
Ձիարշավի հրապարակ:  
Բշում են ու խփում իրար,  
Վայր են գցում ձիերից ցած:  
Ասես գետն ե հորդում վարար  
Ալիքներով իր լեռնացած:  
Մի սուր խրխինջ լավեց հանկարծ  
Ու վոնց հյուսք սարից փրթած՝  
Մի վիշապ ձի բոց ու կրակ  
Թափով մտավ հրապարակ  
Ու սիգածեմ առաջ սուրաց,  
Պատվարներում արավ թոնիջ.  
Մոկաց Միրզեն եր թե առած,  
Մկունդների խուրձը ձեռին:  
— «Հէյ, գլուխդ», — կանչեց Միրզան  
Ու մկունդը, վոնց վոր նիգակ,  
Սուրաց ողում ու շեշտակի  
Գլխին խփեց, փոեց մեկին:  
Մեկը շրջվեց ձիու տակին,  
Հարված առած իր կոնակին,  
Մեկի քոյուզն ընկավ ճամբին,  
Մեկին ել ձին չոքեց տափին:  
Վոնց անեղի քամին յելած  
Յրիվ կտա հոտը արագ.

Մկունդների հողմի առաջ  
Բացվեց մի մեծ հրապարակ:  
Մոկաց Միրզի ձեռից թռած  
Վոչ մի մկունդ իրուր չանցավ,  
Վոչ մի նժույգ, խաղից յելած,  
Հրապարակ ել չդարձավ:  
Դրդուում է Մալաքավեն,  
Ծափերի տակ ալեկոծվում,  
Խրխնջում է Բող-Բաղավեն  
Ու հաղթական սանձը կրծում:

\* \* \*

Հանկարծ Մոկաց սարի ճամբին  
Մի մենավոր ձի յելեաց.  
Յերիվարը խիստ բեղարած,  
Ջիւղորը՝ փոշում կորած:  
Հասավ մեյդան ու կանգ առավ,  
Բարև տվեց ու ցած թռավ.  
— «Ո՞ւր ե, ասավ, Մոկաց Միրզին,  
Թղթիկ ունի նա Ջղիրեն:  
Փոշում կորած ձիավորին  
Մոկաց Միրզի մտը բերին,  
Վորը Միրզին խոր բարեկց,  
Հետն ել հանեց մի թուղթ տվեց:  
Միրզան պատեց թուղթն ու կարգաց,  
Ապա նայեց հոնքը կիտած.  
— «Միր-Մահմուդի հրամանն է սա,  
Ինձ Ջղիր է կանչում». ասավ:  
Հետո գրեց յերկար նամակ,  
Թե՛

— «Միր Մահմուդ, են խորամանկ  
Կոլտ-Սոջեն ու մեր փախած  
Տանուտերները չար-հախանձ  
Քանի վողջ են ու պալատում  
Մոկաց տան դեմ դավ են նյութում,  
Ու քանի դեռ, վորպես ավագ,  
Յես չեմ յերկրիս հարկահավաք,  
Այլ ձեր կողմից կարգած Սոջեն,  
Ջղիր չի գա Մոկաց Միրզին:  
Հետ դարձրու փախածներն ինձ,  
Գահից վտար կղամ նորից:  
Ապա կանչեց թղթաբերին  
Ու պատվիրեց տալ եմբրին:  
Ու, վոնց վոր ամպ յերկնի մովում,  
Սե ձին կորավ փոշու ծովում..

## ՅԵՐԿ ՅՈԹԵՐՈՐԿ

Եմիր Մանմուղը պաղ ափազանուժ  
Վաղ առափոտվա նամագն եր անուժ:  
Զիափորը լուռ կանգ առավ մի պահ  
Յեվ յերբ աղոթքը վերջացավ, ապա  
Մոտ գնաց, չոզեց, խոնարհ բարեկեց  
Ու հանեց Միրզի նամակը ավեց:  
Մանմուղը նայեց նամակին, զրին,  
Ապա մոտ կանչեց իր քարտուղարին,  
Ու մինչ քարտուղարը նամակն եր կարդում  
Վոնց փոթորկաբեր ամպրոպի պայթյուն,  
Մանմուղի ձայնը զգրդաց սղում:  
— «Եմիրին ույա խանն ե խրատում»:  
Ապա հրամայեց իր քարտուղարին  
Գրել տերության հպատակներին\*  
— «Ալլահից տրված մեր իշխանությամբ  
Ու մարգարեյի կամքովը վերին,  
Ամբը ենք անում մեր վոզջ տերության  
Ռայա-նորյարին ու մեծավորին,—  
Շուտ գենք առնի—գան ու կոխի գնա  
Մոկաց ապստամբ նենդ Միրզի վրա,

Վոր ջարդել է մեր հարկահաններին,  
Յեվ հարկն ու գորքը վերցրել գերի»:

\* \* \*

Հրամանը հասավ Բոհտան,  
Հալար ու Շամ, Արաբստան  
Ու աշիրներն վոտքի յելան,  
Վոր տարածեն մահ ու թալան:  
Ամեն կողմից գորքեր հասան,  
Լցրին դաշտեր, ծմակ ու սար,  
Լցրին ձորեր, քար ու կապան  
Լցրին արտեր, ճար ու ճամբա,  
Լցրին արոտ, բար ու բազա,  
Լցրին անտառ, մայրի, կածան,  
Վերը վոտով, վերը հեծած  
Յեկան-յեկան, հավաքվեցին  
Մանմուղի գորքն ու այրուձին:  
Ու բազմությամբ—հրով, սրով,  
Գյուղ ու քաղաք սրի տալով,  
Վոնց լավան ե սարից հորդում,  
Զորը լցնում, ճամբա հարթում,  
Հեռե թողած վողր ու հառաջ,  
Իր գորքն արքան շարժեց առաջ:

\* \* \*

Լուրը թռավ կայծակի պես  
— «Բն, չեք ասում, այսպես, այսպես...»  
Մոկսը կանգնեց են սարի պես.  
Ու վոնց մի մարդ վոտքի յելավ

Ով ազնիւ էր, շիտակ ու լավ,  
Ով թափել էր հալալ քրտինք—  
Մնացել էր մերկ, անոթի,  
Առանց ազգի՝ հայ ու քրդի,  
Բոլորը մեկ յելան վտտի:  
Վոտքի յելան ջահել, մանուկ,  
Վոտքի յելան անել ու ծեր,  
Ավեր ճամբեք դարձան բանուկ,  
Դղրդացին լեռ ու քերձեր:  
Ամեն կողմից հավաքվեցին՝  
Զինված մահակ ու բրերով,  
Զինված նիզակ ու սրերով,  
Շատերն առած թուր ու թվանք,  
Վոմանք՝ մանգաղ, բահ ու կացին,  
Ու Միրզայի ամրոցի տակ  
Վաղ-առավոտ լուսաբացին  
Արին հսկա գորտհավաք:  
Ու թափվում է նետերի հորդ տեղատարափ.  
Մարտի ձայնից դղրդում են լեռ ու քարափ,  
Դիակներ են ընկնում շերտ-շերտ իրար թափած,  
Լցնում ձորեր, կիրճեր, մացառ, ճար ու ճամբա,  
Լցնում կածան, հանում քերձեր—քար ու կապան,  
Արյունը հորդ վարարում է գետ ու առու  
Ու արնախեղդ դիակներ ե՛ք ըշում հեռու:  
Բայց գալիս է Մահմուդի գոբըն ինչպես մորեխ,  
Ինչպես գարնան հալին փրթած պղտոր հեղեղ,  
Առաջ-գալիս, հորձանք տալիս ու աղմկում,  
Ժայռերի գեմ անգոր ցասկում, փրփուր թքում  
Ու փշրված հետ է գնում, ճամբան թեքում:  
Իսկ վերևից, թառած լեռան կատարներին,

Ապավինած ձեռ-անառիկ կարկանդակներին՝  
Հարվածում են Միրզի քաջերն—գոշը քարին:  
Կռիվ տվին, մինչև արևն իջավ սարին,  
Իջավ նստեց սարերի սուր կատարներին.  
Կռիվ տվին, մինչև մթնեց ձոր ու ծմակ  
Ու ստվերում կուլ գնացին ջուր ու ցամաք:  
Իջավ գիշերն ու դաղարեց ուղմ ու պայքար,  
Բայց գիշերում արթուն է դեռ ամեն մի քար,  
Ամեն քարի տակ պառկած մի սիրտ է տրոփում,  
Ամեն կրճքում մի ցասում է սիրաբ լափում:  
Մնւթ, խավար, գիշեր... աստղերն են միայն անգոր  
պլպլում

Ու հեռու հովտում թշնամու վառած կրակն է  
փայլում:  
Պահակներն արթուն հայացքի տեղով խավարն են  
խոցում,  
Ու խավարն ասես լուծվում է, հալվում աչքերի  
բոցում:  
Լեռներն անառիկ, ամուր որտի պես շինական մարդու  
Ասես յե՛նում են դեպի յերկինքը, բարձրանում,  
հորդում  
Ու պարսպի պես պաշտպանում Մոկաց յերկիրն  
անառիկ,  
Աշխատանքն ազնիվ ու ռամկի արդար վաստակն ու  
քրտինք:  
Լուռ է գիշերը, ու լուսթյան մեջ, խավար գիշերում  
Սրտերն են միայն ուժգին տրոփում, ու ամեն  
դարկում

Ասես լավում ե խուլ մի արձագանդ ամեն մի  
զանգում...

—«Ե՛յ, սիլ ե այդտեղ անդուլ թափառում ժեռ ու  
թփեքում»...

\* \* \*

Թշնամին նույնպես արթուն եր հովտում  
Ու խավարի մեջ դավեր եր նյութում.  
Իսկ վերն՝ անառիկ լեռների գրկում,  
Ինչպես գիշատիչ անդղը յերկնքում,  
Նենդ տանուտերեր,— ազա ու գգիր  
Թակարդ են լարում քաջ Մոկաց Միրզին:  
Շլացած փառքով Բե տենչով վոսկու,  
Սորհուրդ են անում ու արթուն հսկում:  
Ինչպես թունավոր սնն ե սողոսկում,  
Մանում ե ծոցը խայթում քնածին,  
Դավաճանները Մոկսը ծախեցին  
Ու մութ կիրճերի դռները բացին:

Ընկավ Մոկսը, ու կապկապած Մոկաց Միրզին առաջ  
բերին,

Ինչպես առյուծը վանդակում, շղթաների խուրճը  
ձեռին:

Նայեց գոռոզ Միր-Մանուզը ու հաղթական յելավ  
վոտի,

Բայց հեռ գնաց, ասես յերկու տեղի հարված առավ  
սրտին.

Խնդաց դասկոս, ապա նայեց առելու թյան անդսր  
կըքով,

Բայց խորամանկ մի միտք ծագեց ու հիացած իր լավ  
ձիրքով՝

—«Ո՛վ իմաստուն ու քաջ, ասավ, հաղթեցի քեզ  
ահեղ մարտում,  
Բայց այն, ինչ վոր դեռ չեմ հաղթել, քո պնդիվ սերն  
ե իմ սրտում:  
Քեզ եմ բաշխում քո կյանքը յես, մահ չեմ ուզում  
քեզ պես քաջին,  
Յանհանում եմ, վոր դու՞ դառնաս խորհրդատուն իմ  
առաջին,

Վոր քո խելքով իմ յերկիրը ինչպես ծաղիկ  
բարդավաճի

Ու հաշտ ապրեն, վոնց վոր առաջ՝ թուրքն ու հայը,  
քուրդն ու տաճիկը:

Մոկաց Միրզին կանգնել եր վես ու արծվային իր  
հայացքով

Նետահար եր անում ասես իր թշնամուն չար ու  
նենդող:

—«Ո՛վ Միր-Մանուզ, ասավ Միրզան, դու հաղթողն  
ես, յես՝ քո գերին,

Բայց դավաճան կլինեմ յես, թե հավատամ քո  
խոսքերին:

Դու հաղթեցիր, աոիր Մոկսը, բայց արծիվներն իմ  
սար թռած

Կառչողանվին յերկնք-յերկնք, ու չեն չոքի դահիգ  
առաջ.

Ու թե մեռա յես քո ձեռքով, իմ անունը, դաքճած  
փառս,

Կհավաքի իմ քաջերին ու կժփա վարպես դրոշմ:  
Խորամանկ եր Միր-Մանուզը, բայց զինաթափ  
յեզավ՝ ասես.

«Ճշմարիտ ե ասում Միրզան, նրա մահից շահ չունեմ  
յես»:

Միտք ե անում Միր-Մահմուդը. «Գերի վարեմ նրան  
Ջզիր».

Մահն իմ ձեռին ե, յերբ ուզեմ, գուցե խելքի բերեմ  
Միրզին

Ու համոզեմ՝ մի թուղթ գրի սարը յելած իր գորքերին,  
Այնժամ միայն լեռնաշխարհը կգա կընկնի իմ  
վտարերին»:

\* \* \*

Թմբուկների թնդուններով Միր-Մահմուդը մտավ  
Ջզիր

Ու հաղթական զորքն հեռևից--ցեղապետներ, խան ու  
վեզիր

Բերում էյին շղթայակապ հեքիաթային Մոկաց  
Միրզին.

Քաղաքի մեծ դարպասի մոտ ամբոխն յելավ զորքի  
առաջ,

Հաղարավոր հիացմունքի հայացքները Միրզին հառած:  
Լուսամուտում հարեմների, վանդակների փեղկին  
կպած,

Միրահարի հայացքներով ու կարոտով սրտերը բաց  
Քանի-քանի հանրմների կրծքից պոկեց Միրզան  
հառաչ,

Քանի-քանի սրտեր մարեց հուր կարոտի համը  
չառած:

Մոկաց Միրզեն գնում եր վես գլուխը բարձր, ինչպես  
արծիվ,

Ասես՝ յեթերն եր խոյանում թռիչքովը իր ամպածիր:  
Հայացքը ջինջ ողում մեխած ու ընթացքը

հաստատաքայլ,

Ասես՝ ինքն եր հաղթանակով տալիս յեթերին այդ  
շուք ու փայլ...

Յեվ յերբ Միրզան աչքից կորավ զինվորների կուռ  
ողակում,

Մոկաց Միրզի անունն եր դեռ շրջում գյուղում ու  
քաղաքում:

Վոչ վոք խոսեց Միր-Մահմուդի հաղթանակի, կովի  
մասին,

Ամեն մի տան զըուցելիս գովում էյին Մոկաց Միրզին.

—«Հաղար ափսոս, Մոկաց Միրզեն.

Չկա քեզ պես Հինդ ու Բառին,

Հաղար ափսոս, թառլան բազեն,

Ափսոս, ամպած քո սեզ սարին:

Ափսոս, ափսոս, Մոկաց Միրզեն,

Ափսոս, թողած սիրուն յարին»:

## ՅԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԿ

Ինչպես առյուծը վանդակում՝ Մոկաց Միրզին մնաց  
Զգիր:

Իզուր եյին սիրաշահում Մահմուդն ու իր նազիր-  
վեզիր,

Վոր թուղթ գրի իրա ձեռքով իր քաջերին սարեր  
վախած

Ու հորդորի ժողովրդին՝ հպատակվի, սարից գա ցած:

Իզուր: Միրզան միշտ պնդում եր.—լավ ե կրեմ  
ձեռքիս շղթան,

Քան թե աշխարհն իմ հայրենի զոհ բերեմ իմ  
ազատության:

\* \* \*

Այսպես անցան սրեր-սրեր... Իսկ այնտեղ՝ վեա  
լեռնապարում

Մոլեզնում ե կռիվը դեռ ու Մոկացին իր բերդերում,  
Ամբոցներում ու քերծերում, ժայռերի տակ, կտրկառնե-  
րում,

Անտառների թափուտներում, մացառների  
թփուտներում,

Շավիղներում, բավիղներում, կածաններում, արտ ու  
ափում,

Վրա տալիս ու կտորում, դիակներ ե իրար  
թափում:

\* \* \*

Պարտության սե բռթը թռավ հասավ Զգիր, ու  
Զգիրում

Իրար անցան Մահմուդն ու իր պալատական վեզիր-  
վզրուկ:

Միր-Մահմուդը խորհուրդ արավ հրավերեց իր  
պետերին.

Յեկան յերկրի պետերն իսկույն, բարեկամներ ու  
մտերիմ:

Հավաքվեցին իմաստուններ ու մեկնիչներ չար  
բախտի

Ու քննում են, թե այս մարտում կովոյններից ո՞վ  
կհաղթի:

—«Ո՛վ իմ պետեր,—ասավ նրանց Միր-Մահմուդը  
նենդ ու դաժան,—

Պատերազմում դափնիները ձեռք չեն բերում հեշտ ու  
եժան.

Բայց մի բուռը ժողովրդի մեզ հասցրած  
պարտությունը

Մեզ չի ների մեր սերնդի հերոսական պատմությունը:  
Մեր ձեռքին ե Մոկաց Միրզան՝ շղթայակապ վորպես  
գերի

Ու վազուց նա զոհ կգառնար ցասման, արդար մեր  
կրքերին,

Յեթե միայն ոգուտ բերեր նրա մահը մեր գորքերին.  
Ուստի հարմար մենք դատեցինք՝ գուցե կյանքով  
մեզ շահ բերի»:

Առաջ յեկավ խոնարհելով Կոլոտ-Սոջեն նենգ ու քսու.  
— Ականջ արձ, սվ Միր-Մահմուդ, թե ստրուկդ ինչ  
ե ասում.  
Ջուր ես պահում քո վոսոխին, իզուր ես դու նրան  
ներում.  
Նրանից քեզ փնաս կզա նույնիսկ բանտում,  
չդթաներում:  
Քանի Մոկաց Միրզեն ապրում ե սահմանում այս  
աշխարհի,  
Անառիկ են Մոկաց սարերն ու մենք ուղղից բան  
չենք շահի:  
Յեվ Մոկացին առյուծի պես կռվում ե, վոր փրկի  
նրան,  
Բայց ավելի վտանգավոր զեղեցիկութունն ե  
անակաճ,  
Վորի մասին յերզ են կապել ու յերզում են  
հարեմներում  
Ու փոթորկում ընտանեկան խաղաղ կյանքը մեր  
տներում:  
Ականջ արձ, սվ Միր-Մահմուդ, ու թե հաճո յե քո  
սրտին,  
Քո իմաստուն զատաստանը, աղաչում եմ, հանձնիր  
ստին.  
Պալատ կանչիր արզ ու փառքով ու հաշտության  
խոսք բաց արա  
Թե այս անգամ ել համառի, գործ կրոնենք պոսանց  
նրա...  
Յեվ վորպեսզի իր գործերը ես առավել չզազագեն,  
Մենք կհայտնենք՝ չար զիպվածի զոհ գնաց ձեր  
Մոկաց Միրզեն...

Այնժամ զինվոր ու ժողովուրդ մերը կլինեն  
ուզեն-չուզեն»:  
— Հն, հն, հն, հն,— խնդաց Մահմուդն ու զոհ վոտքի  
յելավ նիստից:  
— Հն, հն, հն, հն,— ծիծաղեցին,— արժանի յես դու  
գովեստի:

\* \* \*

Միր-Մահմուդը խնճուղք սարքեց, պալատական ճոխ  
հանդես,  
Ու ամբողջ իր մոռյլ ու գորշ դարձավ ծաղկած մի  
պարտեզ:  
Կանչեց յերկրի ավագանին, պալատական ու ուղղմիկ,  
Յեղապետներ աշիրների, սովոր մարտի ու խաղմի:  
Պալատ բերին նաև Միրզին ու մոտեցրին սեղանին,  
Ավագանին վեր կացավ, վոր Միրզին վայել տեղ անի:  
Հարավի վառ նոսան զինին հոսեց փրփրուն զետի պես  
Ու տաքացավ սեղանը ճոխ, յեռաց խնճուղք ու  
հանդես:  
Բացվեցին փակ լեզուները ու խոսում են համարձակ,  
Լոկ Միրզան ե նստել տխուր—վոնց մարմարե մի  
արձան:  
Միր-Մահմուդը առավ թասը փրփրուն, արյան պես  
կարմիր.  
— Վերցր՛ւ գավը, Մոկաց Միրզն, ասավ, վերցրու ու  
քամիր:  
Այս խնճուղքը լոկ քեզ համար, քո պատվին եմ յես  
սարքել,

Ու քեզ խաղաղ մեր հաշտութեան դատաւոր եմ յես  
կարգել:  
Վերցրո՛ւ, խմիր քառասուն տարվա նոան գինին այս  
փրփրուն.  
Քառասուն տարվա մեր մտերիմ սերն ե այստեղ  
փրփրուն:  
Ասում են՝ դու սիրում ես ճոխ խնջուքները, կեր ու  
խում,  
Մենք ել մարդ ենք, մեր կրծքումս ել մի լավ սիրտ ւ  
բարակում:  
Գավգ վերցրո՛ւ, խփենք իրար, անհաշտներին—  
հաշտություն,  
Թող չորանա, ով հնարեց այս կռիվն ու գժտություն:  
Մոկաց Միրզան նստած եր լուս ու լուսմ եր  
Մահմուդին,  
Ճիգ եր անում լավ քմբունել, վոր չղոճվի նենդ ստին.  
—Ո՛վ Միր-Մահմուդ,— ասավ Միրզան,— գիտեմ հարզը  
լավ խոսքի.  
Անկեղծ խոսքը, բերնից յեկած, խոսք չե միայն, այլ  
վոսկի:  
Կուզեմ հավատ ընծայել քեզ, արձագանդ տալ քո  
կոչին,  
Բայց ի՞նչ սրտով, յերբ նայում եմ փեշից պրծած այս  
պոչին:  
Ասավ ու ցույց տվեց խոջին. ախրեց խորին  
լուսթյուն.  
Միր-Մահմուդն ել պահ մի լոեց, սրտում կուտած  
բարկություն:  
Մարդը միայն մի անգամ ե, Միրզան, ասավ, վատ  
գործում,

Յեզ ո՞վ ե, վոր իր վողջ կյանքում լափն ու վատը չի  
փորձում:

Ապա կանչեց խնճուք յեկած պալատական աշուղին  
Ու կարգադրեց մի յերգ ասել, վոր մտքերը նա շեղի,  
Աշուղն առավ ուսից կախած սազը, խփեց լարերին  
Ու սազի հետ այս յերգն ասավ՝ գովքը անցած  
դարերի.

—«Վոսկի սիմ եմ քաշել սազիս,  
Անապատներ եմ անցել,  
Տեսել փարթամ բյուր ովազիս,  
Պապակ սիրտս ե հովացել.  
Բայց յերեք բան գտա կյանքում.—  
Ուժը, խելքն ու գեղեցկություն:

—«Ծովեր եմ յես անցել-դարձել,  
Սարեր եմ վեր բարձրացել,  
Տեսել պալատ, հարուստ գանձեր  
Ու շատ բան եմ իմացել,  
Բայց յերեք գանձ գտա կյանքում.—  
Ուժը, խելքն ու գեղեցկություն:

—«Նփենք լարին, հնչիք, սնգ իմ,  
Գովենք կարիճ Մոկաց-Միրզին.—  
Դոշը ժեռ ե՛ պոկած սարից,  
Թիկունքը պինդ պողպատ սալից,  
Կուռը ճկուն, ինչպես յեղեգ,  
Արժե քառասուն ջահել տղեք:

—«Նփենք լարին, ինչե սազի,  
Գովենք խելքը Մոկաց Միրզի,—  
Պայծառ միտքը աստղ ու արև,

Չի մոռացվի դեռ շատ դարեր,  
Իմաստությունն և վարար դետ,  
Խելքի ծով և ամենագետ:

— Ենփինք լարին, ինչե սաղին,  
Գովենք ջիվան Մոկաց Միրզին.—  
Հասակն ասես— չինարի ծառ,  
Դեմքին լույս և շողում պայծառ,  
Աչքերը գույգ սրած նետեր,  
Ճակատը լայն, շողուն այտեր,

— Եհայց ընդարձակ աշխարհի մեջ  
Ձկա հաստատ վոչ մի բան,  
Ու ամեն ինչ գնում և վերջ  
Դեպի մահվան սև ճամբան:  
Անցել, անցնում են աշխարհից  
Գանձ ու փառքը, գահ ու թաղ,  
Լոկ մի բան և մնում մահից՝  
Գործն և ու լավ հիշատակ...

Ջնդաց սիմը վերջին անգամ, թույլ թրթռաց ու  
մարեց,

Ասես մի կյանք այրվեց— հանդավ, սրտի զարկը  
զազարեց...

Կոչնականները վեր կացան ու ցրվեցին լուռ ու մունջ,  
Միայն Մահմուդն էր քարացել, ասես յերագ եր,  
անուրջ...

## ՅԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Գիշերն անցավ չար ու դժնի, բացվեց մի նոր  
առավոտ,  
Ու տապն իջավ, ծածկեց Ջգիր, ինչպես վերքը  
շարավոտ:

Իջավ, գրկեց, կուլ գնացին գյուղ ու քաղաքը  
մուժում,

Ասես՝ անտես մի թշնամի դարպասից ներս և  
խուժում:

Մահմուդն ընդոստ զարթնեց քնից ու այվանից իջավ  
ցած,

Ծանր ու դժնի յերագներից իր գլուխը ծանրացած,  
Իջավ, կանչեց Կոլոտ-Խոջին ու բացեց սիրտը նրան,  
— Եժորհուրդ տուր ինձ, Խոջա՛, ասավ, խորհուրդ տուր  
ինձ մի բերան:

Վերջ պետք և տալ այդ համառին, իզուր և շատ  
սպասել,

Վերջ տալ, քանի Միրզի ասողը իր զենիթին չի հասել:  
Գերի տեղով շղթայել և նա սրտերը ամենքի,  
Մի Միրզա յե ու մի աշխարհ, ասես՝ տերն և  
աշխարհքի:

Կուզեմ նրա վառվող աչքերն այրվեն իր իսկ հնոցում  
Ու տաք սիրտը մոխիր դառնա իմ վրեժի թեժ բոցում  
Մշուշ դառնա միտքը պայծառ ու ամպի պես չքանա,  
Վոր վոչ մի մարդ ել պատմության այս յերեսը չբանա:

\*  
\* \*

Կուրտ Խոջեն վազեց շուկա, բերեց մի մեծ ձմերուկ,  
Միր-Մահմուդը տեսավ, խնդաց, ասավ.— «Այդ ինչ  
ես բերում...»  
—Ո՛վ Միր-Մահմուդ,—ասավ քսու Կուրտ խոջեն  
Մահմուդին—  
Մեկին սա քաղցր հաճույք կտա, մեկին ել մահ, թե  
ուտի...  
Դանակն ունի յերկու յերես, մեկին թույն եմ քսել  
յես.  
Թունոտ շերտը Միրդին կտաս, մաքուր շերտը դու  
կուտես...  
...Ու կհայտնենք՝ Մոկայ Միրդան թունավորվեց  
ոճերից,  
Ու վոչ մի մարդ չի կասկածի թե նա մեռավ քո  
ձեռից:  
Քան-քան, խնդաց Միր-Մահմուդը.  
—«Խոջա, խելքի ծով ես դու...»  
Խոնարհ գլուխ տվեց Խոջեն, լսելով իր գովեստը:

\*  
\* \*

Միր-Մահմուդի ճոխ պարտեզում շատրվաններ են  
ցայտում,  
Վճիտ, մանկան արցունքի պես, վոնց լուսինն է  
արծաթում,  
Ծաղիկներ են ծաղկում պես-պես, ինչպես մանկիկն է  
ժպտում  
Ու բլբլուլի յերգն է հնչում սովերախիտ  
սաղարթում:  
Բազմել է ճոխ սուփրի առաջ Միր-Մահմուդը գոհ  
դեմքով  
Ու հրճվում է իր պարտեզով, ապարանքով ու  
փառքով.  
Իսկ նրա դեմ բարձին հենած Մոկայ Միրդան  
մտացիբ  
Նստած՝ նայում է Մահմուդին, դեմքին թախիժ  
ամպածիր:  
Լուռ նստած են իրար հանդես, խոսք չեն գտնում  
խոսելու.  
Միր-Մահմուդն է Միրդին կանչել—դուցե բան է ասելու:  
Յեվ վերջապես Մահմուդն ասավ.  
—«Միրդան, դուր ես սրտնեղում.  
Մարդը մարդուն կձանաչի ճանապարհի նեղ տեղում:  
Շատ ցանկացա, վոր դու լինես մեզ ոգնական մեր  
գործում,  
Բայց իվերջո համոզվեցի, վոր իզուր եմ յես փորձում:  
Վարդի թփից պոկված բլբլուլն էլ չի յերգի  
վանդակում,  
Արժիվը վեր չի սավառնի, յերբ վանդակումն են  
փակում:  
Քեզ սիրում է ժողովուրդը, դու էլ նրան ես սիրում,

Քո անունն ու փառքը ընդմիշտ կապրի նրանց  
սրտերում.  
Լավ են ասել. «Այս աշխարհից անցնում են գանձ,  
գան ու թագ,  
Լոկ մի բան է մնում մահից՝ գործն է ու լավ  
հիշատակ»:  
Լավ հիշատակ թողնել կյանքում — այդ է և մեր  
նպատակ.  
Նորից Մոկաց Միրզեն ես դու, մեր նախկին լավ  
հպատակ:  
Գնա ազատ Մոկաց աշխարհ ու տեր դարձիր քո  
յերկրի,  
Կառավարիր ինչպես առաջ ու տրվելիք հարկերի  
Գործը, վորպես յերկրի ավագ, կարգավորիր վոնց  
կուզես,  
Քո իմաստուն խելքի համար վստահում ենք միայն  
քեզ»:  
— «Ո՛վ, վորոքմած մեծ թագավոր, ասավ Միրզան  
եմիրին:  
Ինչ վոր չարին բանակները, քո խոսքերը այն արին:  
Այժմ իրոք հաղթեցիր ինձ քո իմաստուն խոսքերով,  
Մոկաց Միրզան այսուհետև կձառայի քեզ սիրով»:  
Միր-Մահմուդը մտքում խնդաց՝ լսելով խոսքը Միրզի,  
— «Ո՛, վո՛չ ասավ, առանց քեզ ել, տեր կլինեմ յես  
Մոկսի...»:  
Ապա առաջ քաշեց բերած ձմերուկը և կտրեց  
Ու թունավոր շերտը Միրզի սուփրի վրա նա գրեց.  
— «Անուշ արս, Մոկաց Միրզա, հաստատ մնա սերը  
մեր

Ու այս կտրած ձմերկի պես քաղցր լինի, տո՛  
սերմեր»:  
Ասավ Մահմուդն ու թունավոր դանակն Միրզի մոտ  
դրեց,  
Իսկ ինքն առավ ուրիշ դանակ ու մաքուր շերտը  
կտրեց,  
Կտրեց-կերավ՝ հոնքի տակով Մոկաց Միրզին նայելով  
Ու վրեժի փոթորիկը կրծքի տակը պահելով:  
Միրզան խարված նհնգ խոսքերից, գլուխ ավեց  
հարգանքով  
Ու թունոտ շերտն առավ, կտրեց թունավորված  
դանակով,  
Կերավ մինչև վերջին պատանն ու դո՛հ սրբեց  
ձեռքերը:  
Խնդաց մտքում Միր-Մահմուդը.  
— «Բավեցիր քո մեղքերը...»:  
Հանկարծ Միրզի ձեռքը դողաց ու աչքերը մթնեցին.  
Յերակներում ասես հալած կուպր ու կապար  
թափեցին...  
Քան, քան, խնդաց Միր Մահմուդը.  
— Կյանքը, Միրզա, հանաք չի,  
Ու վրեժից փոթորկված սիրտն առանց դո՛հ չի  
հանգչի:  
Շարբաթի տեղ թույն ծծեցիր իմ վրեժի ակունքից  
Ու մի հուսա դու փրկություն այս աշխարհում  
վոչ-վոքից:  
Ծխի նման կանցնի քո փառքն ու անունը աշխարհից  
Ինչպես փրփուրն է փշրվում ալիքների հոսանքից:  
Ցասման ուժգին մի փոթորիկ յեռաց Միրզի կրծքի տակ

Ու բոունցքը վեր բարձրացավ, վոնց պողպատյա  
կուռ մի թակ,  
Մակայն ձեռքը ոգում գողաց ու ծնկները ծալվեցին,  
Մբաի հողմն ու միտքը պայծառ գորշ մշուշում  
հալվեցին...

Ծովեց կզակն ու բերանը ու քաղցրախոտ շրթներեց  
Ել չի լսվի վոչ մի գրույց հերոսական վեպերից:  
Բոց աչքերի սուբ նետերով ել չի խոցի վոչ մի սիրտ,  
Սիրան են խոցել չար աշխարհի սրենքները նենդ ու  
բիրտ:

Մարեց Միրզի կյանքը պայծառ, ինչպես աստղերն  
են մարում

Ու իր սիրտ վառ ծիածանն անհետացավ խավարում...

\*  
\* \*

Միր-Մահմուդը նամակ գրեց Մոկայց յերկրի տեր  
մեծերին,

Թե՛—«Ձեր Միրզան թունավորվեց ու զոհ գնաց  
ժանտ սձերին...»

Կուրը թռավ կայծակի պես ու ձեղքեց սիրտը  
Մոկայցու,

Ասես՝ պայծառ սրբ մթնեց, ծով սրտերն են  
ալեկոծվում...

Հեյ-վախ, ափսոս Մոկայց Միրզեն,

Ձկար քեզ պես աշխարհն ամեն,—

Հինդ, Հալար, Շամ ու Ջզիրեն:

Հազար ափսոս Մոկայց Միրզեն»:

Մոկայցիներն լաց ու կոծով ճամբա քնկան դեպի Ջզիր,

Ընծա տարան, աղաչեցին Միր-Մահմուդին նենդ ու  
զազիր,

Ու Միրզայի դիակն առած՝ վերադարձան վողբ ու  
կոծով:

Ճամբու դրին ջզիրցիներն սրտում վրեժ, աչքերը ծով.

«Սառկեր են շուն Կուրտ-Նոջեն,

Վոր չմատներ Մոկայց Միրզեն:

Հազար ափսոս Մոկայց Միրզեն,

Ձկար քեզ պես Հինդի Գյունյեն:

Խեր չտեսներ են սնորեն

Միր-Մահմուդը իր Ջզիրեն,

Վոր չսպաներ Մոկայց Միրզեն:

Հազար ափսոս Մոկայց Միրզեն»:

Դիակն առին յեկան հասան Տալանց Գյալին՝ հին  
Բոնաչեն.

Մոկայցիներն հավաքվեցին մեծ ու պատիկ, քաղաք ու  
շեն,

Տարան դազաղն վողբ ու կոծով Բեռտա սարի վրա  
դրին,

Վողբ կապեցին ու յերգեցին, Մոկայց Միրզի գովքը  
արին.

Անեճք են նենդ Կուրտ-Նոջին,

Վոր չմատներ Մոկայց քաջին:

Հազար ափսոս Մոկայց Միրզեն.

Ափսոս, Մոկայց սարի բազեն:

Խարար տարեք Ալ-Նաթունին,

Նորը հանի, հագնի հինը,

Իր սիրական Մոկայց Միրզին

Սպանեց են սնորեն:

Հազար ափսոս Մոկայց Միրզին,

Վոր չհասավ իր մուրազին,

Ասեք՝ ափսոս Մոկաց Միրզեն,

Չկար քեզ պես աշխարհն ամեն»:

Ու թաղեցին Մոկաց Միրզին մի բարձր ու ցից սարի  
դռին,

Ուր չի հասնի նենգ մարդկային ապականված վոչ մի  
փռի,

Ուր արծիվն ե վեր սավառնում ու բաղեն ե ճախրում  
ազատ.

Այնտեղ ձուլվեց Մոկաց Միրզեն տարերքներում իր  
հարազատ:

«Հազար ափսոս Մոկաց Միրզեն.

Հեյ, վախ, ափսոս Մոկաց Միրզեն...»

## ՅԵՐԴ ՏԱՍԵՐՈՐԴ

Սարի լանջին, աղբյուրի մոտ կա մենավոր մի պաղ  
շիրիմ.

Աղբյուրի ու շիրմի վրա ծառ ե՝ աճում շիմշիրի.

Սաղարթախիտ այդ ծառի տակ մշակն ե իր խոնջը  
առնում,

Ու հովիվն ե նստում այնտեղ, յերբ հոտի հետ տուն  
ե դառնում.

Նստում ե պաղ աղբյուրի մոտ, հանում սրինգն իր  
շիմշիրի,

Լուռ նայում ե շիրմի վրա ու ծայր տալիս իր  
հուշերին...

Հուր կարոտով աղջիկները այց են գալիս այդ  
շիրմին

Ու թախիծով, աչքերը ծով, հառաչում են լուռ,  
մտերմիկ,

Փունջ անում թարմ ծաղիկներից, սփռում շիրմի վրա  
այն լուռ

Ու հողաթումբն են համբուրում՝ սրտերումը վերք ու  
մրմուռ:

Սրտից խոցված յեղնիկի պես սարերն ընկած  
Ալ-Սաթունը

Սիրտն եր քամում, վողկնւյզ, վողկնւյզ դառնության  
սև անոթում.

Սիրտն եր քամում, լալիս, կոծում, դեմքը ճանկուում,  
հեծեծում,

Ու վոնց խոփի, այլովում եր լուռ ալ վշտերի հնայում:

Մեկ ընկնում եր գերեզմանին, մեկ փախչում եր  
սարսափած,

Սև հողցանում գլխին, փետում հյուսկեննեքը իր թափած,

Ապա նստում քարի վրա, պղտոր նայում եր թմբին

Ու քարանում, ասես ըմպած լինեք հաշիշ ու թմբիր..

«Մեկ ձիավոր... թռավ-գնաց սարնիվեր

Սեվ ձիավորն, առած արծվի գույզ թեք,

Ու տարավ իմ արնատ սիրտն իր ճանկերում,

Իմ վիրավոր սև սրտիկն ե ճանկրուում...

«Հեա դարձիր, ե, սարից թռած ձիավոր,

Հեա դարձիր, հեա, արծիվ դառած թևավոր,

Բեր սրտիկն իմ, սրին առած՝ վիրավոր,

Բեր սրտիկն իմ, սիրով վառված՝ սևավոր...

«Յարս ինչ լավ տուն ե շինել հողի տակ,

Ել չեմ մրսի, ցուրտ ե այստեղ, հողը՝ տաք...

Յարս ե յեկել հարսանիքիս նարտով,

Ի՞նձ ե կանչում, ի՞նձ ե կանչում կարտավ:

Գարնան մի վառ սր, յերբ ձեզը-ձեզին,

Ծափանց հովիվը հենած մահակին

Իր հոտն եր քշում գողանները զով՝

Տարված աղջկա մարած յերագով՝

Նայեց Միլզայի շիրմին ու հանկարծ

Տեսավ՝ աղջկա դիակն ե ընկած:

Մոտ վազեց շիրմին քայլով դողդողուն,

Տեսավ՝ մեռած ե ու ել չի շնչում:

Փետեց իր գլխի մազերն ալևոր,

Պատեց ու բացավ կուրծքը վերավոր.

«Զիմ աչք քոռներ, Ալ-Սաթուն, աղջիկ,

Հնչի՛ սեցուցիր զիմ սիրտը, հնչի՛...»

Արցունք թափ եց հորդ, լաց ու սուգ արավ

Անմուրազ մեռած աղջկա վրա,

Ապա ճանկերով շիրմը փորեց,

Մեռած աղջկան Միլզի մոտ դրեց:

Յերկու դալար ճյուղ տնկեց ուռենի,

Վոր գերեզմանի վրա հով լինի:

Յեվ յերբ կանաչեց, ճյուղ տվեց ուռին,

Գալիս եր նա միշտ, թիկնում եր ծառին,

Առնում սրինզը, նստում կանաչին,

Իր վողբն եր խառնում ջրի կարկաչին,

Յերգում եր, լալիս, մղկաում անհույս,

— Ացկուն լամ, արյուն կաթի աչքերուս...:

## ՎԵՐՋԵՐԳ

Մոկաց Միրզի շիրմի վրա Մոկացիներ գրին մի քար  
Ու այդ քարը անվանեցին—ազատության

հետանաքար:

Այդ կոփածո ժայռի վրա, սրտերի պես սև ու մռայլ,  
Մրում էյին զենքերն իրենց, տեղ ու սրին տալիս

նոր փայլ

Ու նոր թափով կռիվ գնում Մոկաց Միրզի սիրով

վառված,

Ասես՝ Միրզան ել նրանց հետ սավառնում եր արծիվ  
դառած:

Այսպես որեր յեկան-անցան, որն ու ամիս տարի  
դարձան,

Բայց Միրզայի քաջերն իրենց կարկանդակից տուն  
չդարձան:

Կռիվ տվին հանուն արդար աշխատանքի, ազատության  
Հանուն իրենց վտանահարված իրավունքի ու

հաղթության:

Կռիվ տվին. ընկավ Մահմուդն ու զորքերն իր ցրիվ  
յեկան,

Ինչպես մռայլ ամպն է ցրվում, արևն յեղնում է  
հաղթական:

Անցավ Մահմուդն իր փառքի հետ, բայց Միրզայի  
անունն յերկար

Դեռ կհիշվի վորպես սիրո, ազատության հետանաքար:

## Վ Ե Ր Ջ



Պատ. խմբագիր՝ Ն. Զարյան  
Գեղարվեստական ձեվավորող՝ Սա. Ալիթունյան  
Շապիկ և տխուռը Կ. Տիրատուրյանի  
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան  
Կոնարտ սրբագրիչ՝ Յե. Տ.—Մինասյան

Գլավիտի լիագոր՝ Վ. 2110 Հրատ. № 4504.  
Պատվեր 439. Տիրատ 4000.  
Թուղթ 74×105. տպագրական 2 մամ.  
Մեկ մամ. 51,200 նշան.  
Հանձնված է արտադրության 5 մայիսի 1938 թ.  
Ստորագրված է տպագրության համար 20 մարտի 1939 թ.

« Ազգային գրադարան



NL0356206

9000 20. 20 4.

47972

